

Վ. Դ. Ազատյան

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ*

Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելու պահից արդյունաբերության, գյուղատնտեսության, տեխնիկայի, գիտության ու կուլտուրայի հրապարակապես աճի ու զարգացման հետևանքով վաղուց էր զգացվում ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանի կարիքը:

Առաջներում մեր ռեսպուբլիկայում հրատարակված ռուս-հայերեն տեխնիկական նեղ մասնագիտական մի քանի բառարանները, ընդգրկելով միայն մի քանի մասնագիտություններ և հրատարակված լինելով 20—30 տարի առաջ, ևս էին մնացել արագ տեմպերով առաջ ընթացող մեր կյանքից, տեխնիկայի, գիտության, կուլտուրայի ու լեզվաշինարարության բնագավառներում ձեռք բերված աննախընթաց նվաճումներից և, բնականաբար, չէին կարող բավարարել մեր օրավուր աճող պահանջները:

Հայտնի է, որ հայերեն տեխնիկական տերմինոլոգիա ստեղծելն ու մշակելը բոլոր մասնագիտությունների գծով համաչափ չի ընթացել, որ ստեղծված կամ գործածվող (որոշ մասնագիտությունների գծով բավականաչափ հարուստ) տեխնիկական տերմինոլոգիան կարիք ուներ վերանայման, ճշտման և հետագա լուրջ մշակման:

Կասկածից դուրս է, որ ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան կազմելը մեծապես խթանեց այդ գործին:

Իրավամբ բացառիկ կարևորություն տալով նման բառարան կազմելու անհրաժեշտությանը և նկատի ունենալով այդ գործի դժվարությունը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան մի քանի տարի առաջ ստեղծել էր բարձրորակ մասնագետներից կազմված շուրջ երկու տասնյակ մասնագիտական հանձնաժողովներ, որոնց երկու-երեք տարվա աշխատանքի արդյունքն էլ ի մի բերվելով, մշակվելով և խմբագրվելով ստեղծվեց առաջին ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը:

Պետք է ասել, որ թե՛ բառարանը կազմող հանձնաժողովները, և թե՛ մշակող-խմբագրողները, հաղթահարելով մի շարք դժվարություններ, կատարել են մեծ և շնորհակալ գործ՝ ի մի հավաքելով, մշակելով և ստեղծելով քսանից ավելի մասնագիտությունների գծով մոտ 25,000 տերմին և տերմինալին կապակցություններ: Սույալն դրա հետ միասին բառարանը մշակող-խմբագրողները լրիվ չեն կատարել իրենց գործը, որի հետևանքով բառարանը, ցավոք սրտի, ունի մի շարք լուրջ թերություններ՝ բազմաթիվ տերմիններ սխալ կերպով վերագրված են գիտության այս կամ այն բնագավառին, մեծ չափերով խախտված է համանման նյութերի և հասկացողությունների համար տերմիններ գործածելիս կամ ստեղծելիս, ըստ հնարավորին առանձնացվելու չա-

* Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան: Կազմեց մասնագետների կոլեկտիվը: Մշակեցին և խմբագրեցին Ռ. Տ. Աշխարումով, Զ. Ա. Հացագործյան, Վ. Ա. Փոթեյան: ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1957:

փոփ միասնական սկզբունքով առաջնորդվելու անհրաժեշտությունը, միանգամայն սխալ են թարգմանված և սխալ են դրված բաղմաթիվ տերմիններ, մեկից ավելի իմաստ ունեցող մի շարք տերմինների համար չեն տրված նրանց բոլոր իմաստները, կա՛նք բաղմաթիվ անհաջող, երբեմն անհասկանալի և անիմաստ տերմիններ, ավելորդություններ, կարևոր (խմբագրության կողմից չներկայացված) վրիպակներ և այլն:

Ներկա գրախոսականով մենք ցանկանում ենք արտահայտվել բարառանի մի շարք, գլխավորապես քիմիական, տերմինների կապակցություններ, կանգ առնելով ինչպես որոշ սկզբունքային հարցերի, նույնպես և բառարանում տեղ գտած սխալների, վրիպումների և այլ թերությունների վրա:

1. Բառարանում ներկայացված բառերի մեծ մասի համար համառոտագրություններ նշված է այն բնագավառը, որին պատկանում է տվյալ տերմինը կամ տերմինային կապակցությունը: Սակայն բառարանի խմբագիրները մինչև վերջ հետևողական չեն եղել: Մի շարք նեղ մասնագիտական տերմինների համար բացակայում է բնագավառի նշումը, որոշ դեպքերում միևնույն բնագավառի միատեսակ տերմիններից մի մասի համար կա այդ նշումը, մյուս մասի համար՝ չկա. մի շարք դեպքերում հավասարապես երկու բնագավառների պատկանող տերմինի համար նշված է միայն մեկ բնագավառը, իսկ որոշ դեպքերում է՛լ տերմինի համար այն միանգամայն սխալ է նշված: Սրանց պատճառը մասամբ պետք է համարել այն, որ խմբագրողները մասնագիտական հանձնաժողովների ներկայացրած բոլոր տերմինները մեխանիկորեն վերագրել են տվյալ մասնագիտության բնագավառին միայն, թեև ամեն մի հանձնաժողով իր մասնագիտության բնագավառի տերմինների հետ միասին կարող էր ներկայացնել և իրավացիորեն ներկայացրել է նաև այնպիսի տերմիններ, որոնք թեև զուտ այդ բնագավառին չեն վերաբերում, սակայն մեծ չափով կամ հավասարապես գործ ենածվում նաև այդ բնագավառում: Բերենք օրինակներ:

ա) Բառարանում չի նշված բնագավառն այնպիսի տերմինների և տերմինային կապակցությունների համար, ինչպիսիք են ампер, амперметр (էջ 7), дина (8), биссектриса (24), закон постоянства состава (98), թեև այն նշված է закон действия масс, закон кратных отношений և закон сохранения массы համար (98), изоморфизм (111), индикатор (112), калория (119), камера смешения (121), թեև камера-ների այլ տեսակների համար կա այդ նշումը, карбид (123), карбоксильная группа (123), թեև նույն էջում այն նշված է карбонильная группа-ի համար, краска масляная, краска эмалевая (153), кратер (193), мрамор (191), թեև известняк-ի, мел-ի, базальт-ի, гранит-ի համար այն նշված է, нейзильбер (105), թեև այլ միահալույթների (бронза, латунь, томпак) համար այն նշված է, пиридиновая кислота (245), слюда (336), температура кипения (365), терпентин (369), фотоэлемент (400), хронометр (407), թեև хронограф-ի համար այն նշված է, электролит (431), элементарный анализ (432) և анализ элементарный (3), թեև անալիզի մի շարք այլ տեսակների համար այն նույնպես նշված է, эозин (434), гидросфера (62) և тропосфера (379), մինչդեռ атмосфера-ի և литосфера-ի համար այն նույնպես նշված է. троллейбус (379), թեև автобус-ի և автомобиль-ի համար այն նշված է, дуб (89), кедр (128), пихта (247), липа, лиственница (165), թեև այլ ծառատեսակ-

ների համար (береза, бук, ольха, клен, сосна, осина, самшит) ալն նըշված է. конус (142), призма (277), թեև шар-ի, куб-ի, ромб-ի համար ալն նույնպես նշված է:

բ) Բիմիայի բնագավառին են վերագրված ալնալիսի տերմիններ, ինչպես амикрон (7), бездонный ящик (21), бета-латунь (22), брызги (28), дефекация (80), дрожжи (88), измельчение (109), камедь летучий (120), летучесть (163), оловянная фольга (219), отбеленный, отбеливающие земли (226), патока (235), пена (236), прокаливание, прокаленный (282), сажа газовая (315), сапропель (316), сироп (329), ступка (359), сценивание (361), суспензия, сухой лед (360), тубулус (381), хлопья (404), թեև սրանք քիմիական տերմիններ չեն և քիմիայի հետ կամ բոլորովին առնչություն չունեն, կամ ալիլի պալյաս առնչություն ունեն, քան ալ բնագավառների հետ:

գ) Ալնալիսի տերմիններ, ինչպես, ортінակ՝ нейтрон (205), пикнометр (245), спектральный анализ (344), температура воспламенения (365), электрон (431) վերագրված են միայն ֆիզիկայի բնագավառին, թեև նրանք հավասարապես վերաբերում են նաև քիմիային, ինչպես ալ դճիշտ կերպով նշված է բառարանում протон-ի համար: Բոլորովին անհասկանալի է, թե ինչի հիման վրա температура вспышки-ն վերագրված է էլեկտրատեխնիկայի, իսկ температура застывания-ն՝ մեքենաշինության բնագավառին (365), երբ температура плавления-ն իրավացիորեն նշված է որպես ֆիզիկայի բնագավառի տերմինային կապակցություն: Жидкий воздух-ը վերագրված է և՛ ֆիզիկայի, և՛ քիմիայի բնագավառներին (93), թեև ալն միայն ֆիզիկական տերմին է:

Бидистиллат (23), бюретка (30), денсиметр (79), мензурка (176), микробюретка (182), спектр ультрафиолетовый (344), раствор, растворение, растворимость, растворитель (301), твердое вещество (363), форвакуум (398), энергия внутриатомная (433) վերագրված են միայն քիմիայի բնագավառին, թեև դրանք ընդհանուր են երկու բնագավառների համար էլ, կամ ալիլի շուտ վերաբերում են ֆիզիկայի բնագավառին:

Пирит-ը (246), урановая руда-ն (390) վերագրված են նույնպես քիմիայի բնագավառին, անտես առնելով երկրաբանություն-հանքաբանությունը: Тяжелая вода և тяжелый водород-ը (383) բոլորովին անհասկանալի պատճառով վերագրված են ֆիզիկական քիմիայի նեղ բնագավառին: Сгорание неполное, сгорание полное (322) վերագրված են միայն ավտոմոբիլային գործի բնագավառին, թեև ալրումը քիմիական պրոցես է և, բնականաբար, վերաբերում է առաջին հերթին քիմիայի բնագավառին: Электролиз-ը (431) վերագրված է էլեկտրատեխնիկայի բնագավառին, թեև ալն հավասարապես քիմիական տերմին է: Зерхотես ինչու толочь—սղկել (372) վերագրված է մետաղագործության բնագավառին, թեև սղկել կարելի է ոչ միայն մետաղները, ալև ապակին, շաքարը, պակսիմաթը քարը և այլն:

Բիմիական տարր կորալտը և քիմիական միացություններ кобальт фтористый (133) և сульфитный щелок (359), микроанализ (182) վերագրված են մետաղագործության բնագավառին, իսկ аргентан (11), декапировка (78), մետալուրգիական-մետաղագործական տերմինները վերագրված են քիմիայի բնագավառին:

2. Ինչպես մի ալլ առիթով էլ ասել ենք [1], ամեն մի մասնագիտական բառարան կազմելիս անհրաժեշտ է ղեկավարվել համանման տիպի նյութերի և հասկացողությունների համար տերմիններ գործածելու կամ ստեղծելու միօրինակությունից, միասնական սկզբունքով, և ոչ թե նույն տիպի մի խումբ նյութեր անվանել մի կերպ, մի ուլլ խումբ՝ ալլ կերպ (բարդ բառերի կազմը, նախդիրները, վերջածանցները և այլն)։ Այս կարգի մի շարք սկզբունքային հարցեր և բազմաթիվ օրինակներ մենք քննարկել ենք մամուլում [1]։ Մենք հարկադրված ենք կրկնել մեր մի քանի սկզբունքային դիտողություններն ու որոշ օրինակների քննարկումը գրախոսվող բառարանի սխալների և վրիպակների հետ միասին և նրանց կապակցությունից։

Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանում համատարած կերպով խախտված է տերմիններ գործածելու կամ ստեղծելու միօրինակությունը, միասնական սկզբունքը՝ համանման տիպի նյութերի համար, նույն տիպի նյութերը միակերպ անվանելու սկզբունքը ոչ միայն միատիպ կառուցված, մեկնույն իմաստն արտահայտող, այլև հաճախ նույն արմատը և նույն վերջավորությունն ունեցող միևնույն տերմինների դեպքում. օրինակներ՝

ա) Միևնույն տիպի թթուների անունները գրված են տարբեր ձևով, ածականական տարբեր վերջավորությամբ՝ орто-фосфорная кислота—օրտոֆոսֆորակա թթու (223), пирофосфорная кислота—պիրոֆոսֆորակա թթու (246), метафосфорная кислота—մետաֆոսֆորակա թթու (179), фосфорная кислота—ֆոսֆորային թթու (399)։ վերջին դեպքում միօրինակությունն չպահպանելուց բացի H_3PO_4 -ը շփոթած է H_3PO_3 -ի հետ (ֆոսֆորային թթու)։ Пиросерная кислота-ն թարգմանված է պիրոծծմբակա թթու (246), серная кислота-ն՝ ծծմբակա թթու, ծծմբաթթու (324), серная кислота, камерная—կամերային ծծմբաթթու (324), азотная кислота—ազոտակա թթու (4), надазотная кислота—պերազոտակա թթու (195)։

Քանի որ ծծումբը, ֆոսֆորը, ազոտը գոյացնում են մեկից ավելի թթուներ, վերջիններիս անունները միմյանցից տարբերվում են նրանց անունների վերջավորությամբ՝ ծծմբակա (H_2SO_4) և ծծմբային (H_2SO_3), ազոտակա (HNO_3) և ազոտային (HNO_2), ֆոսֆորակա (H_3PO_4) և ֆոսֆորային (H_3PO_3) թթուներ, նախած թե այդ թթուները գոյացել են համապատասխան տարրերի ստորին թե բարձր օքսիդներից, որոնք համապատասխանաբար կոչվում են ծծմբային (SO_2) և ծծմբական (SO_3), ֆոսֆորային (P_2O_3) և ֆոսֆորակա (P_2O_5), ազոտային (N_2O_3) և ազոտակա (N_2O_5) անհիդրիդներ։ Նման դեպքերում միօրինակություն պահպանելն անհրաժեշտություն է խառնաշփոթություն չմտցնելու և թյուրիմացությունների տեղիք չտալու համար։ Առանց այն կամ ակազմ վերջավորությունների միայն ա հոդակապով միացած արմատից և թթու բառից կազմված թթուների ալլ անունները (ծծմբաթթու, ֆոսֆորակա թթու) միայն շփոթությունների և թյուրիմացությունների տեղիք կարող են տալ։

բ) Ինչպես հայտնի է, մի շարք տարրեր հանդես են գալիս տարբեր վալենտականությամբ և ընդունակ են մի ալլ տարրի կամ տարրերի խմբերի հետ գոյացնել տարբեր տիպի միացություններ, օրինակ՝ $FeCl_2$ և $FeCl_3$, $HgCl$ և $HgCl_2$, $SnCl_2$ և $SnCl_4$ և այլն։ Այդպիսի միացությունների անունները կարող են իրարից տարբերվել կամ վերջավորությամբ կամ նախդիրներով։

Բառարանում այդպիսի և նման միացությունների համար միևնույն թվական նախդիրները որոշ դեպքերում գրված են թվականի լատինե-

րեն, ալլ դեպքերում՝ հայերեն անուններով, համաձայն միացությունների համար՝ մի դեպքում թվական նախդիրով, մյուս դեպքում առանց նրան, խախտելով միասնական սկզբունքը՝ Օրինակներ՝ олово бромистое և хлористое թարգմանված են անագի երկբրոմիդ և երկքլորիդ, իսկ ճիշտ նույն տիպի միացությունն олово иодистое թարգմանված է անագի յոդիդ (առանց երկ նախդիրի) (219). նույն էլում էլ олово бромное և олово хлорное թարգմանված են լատինական նախդիրներով՝ անագի տետրաբրոմիդ և տետրաքլորիդ, железо хлорное թարգմանված է երկաթի արիքլորիդ (90), իսկ хлорное железо-ն՝ երկաթի եռաքլորիդ (405), олово хлорное—անագի տետրաքլորիդ (219), իսկ хлорное олово—անագի քառաքլորիդ (405), сера двуххлористая—ծծմբի երկքլորիդ, իսկ сера шестифтористая—ծծմբի հեքսաֆտորիդ (վեցաֆտորիդ) (324), ртуть бромистая և иодистая թարգմանված են առանց թվական նախդիրի՝ սնդիկի բրոմիդ և յոդիդ (312), իսկ ртуть хлористая—նախդիրով՝ սնդիկի միաքլորիդ (313), фосфор иодистый և фтористый—նույն կերպ՝ ֆոսֆորի յոդիդ և ֆտորիդ, իսկ фосфор хлористый—ֆոսֆորի արիքլորիդ (399):

Մենք կարծում ենք, որ միևնույն տարրի տարրեր հալոգենիդները ճիշտ անվանելու և տրված անունով միացություն ինչ լինելը առանց դժվարություն որոշելը հեշտացնելու և շփոթությունների տեղիք չտալու նպատակով պետք է ա) բոլոր տերմինային կապակցությունների մեջ քլորիդ, բրոմիդ, յոդիդ և ֆտորիդ բառերից առաջ դնել միացության մեջ հալոգենի ատոմների թիվը ցույց տվող թվական նախդիրը, բ) ալդ նախդիրը պետք է անվանել հայերեն. օրինակ՝ սնդիկի միաքլորիդ (HgCl), սնդիկի երկքլորիդ (HgCl_2), կապարի քառաքլորիդ (PbCl_4) և այլն:

Նույն կերպ պետք է վարվել նաև օրգանական հալոգենային միացությունների դեպքում. օրինակ՝ երկքլորէթան, քառաքլորածխածին և այլն:

գ) Մի շարք տերմինների դեպքում ռուսերեն три- և много-նախդիրները և ռուսերենում գործածվող поли- լատինական նախդիրը բառարանում որոշ դեպքերում թարգմանված են հայերեն, ալլ դեպքերում հայերեն տառադարձությամբ պահպանված է լատիներենը. օրինակներ՝ полиены—պոլիեններ), իսկ поликристалл—բազմաբյուրեղ (264). поликислоты թարգմանված է բազմաթթուներ, իսկ поликремневая кислота-ն՝ պոլիսիլիկաթթու (264) триолеин-ը թարգմանված է արիօլեին, իսկ նույն տիպի միացություն тристеарин-ը՝ եռաստեարին (378), триглицерид-ը՝ արիգլիցերիդ, իսկ трисахариды-ն՝ եռասախարիդներ (378). калий многосернистый թարգմանված է կալիումի պոլիսուլֆիդ (119), իսկ многовалентный—բազմավալենտ (183) և այլն. моно-նախադիրը մի շարք դեպքերում թարգմանված է հայերեն մի-նախդիրով, իսկ моновинилацетилен-ի դեպքում պահպանվել է անփոփոխ՝ մոնովինիլացետիլեն (187):

Բերված բոլոր օրինակներում, ինչպես և նման ալլ դեպքերում моно-ն, ди-ն, три-ն, поли-ն և այլն նշանակում են համապատասխանաբար միմիայն մեկ (միա-), երկու (երկ-) երեք (եռա-) շատ, բազում (բազմա-) և ալդ պատճառով պետք է գրվեն մի կերպ միայն, բայց ո՛չ մի դեպքում մի կերպ, ալլ դեպքում՝ ալլ կերպ:

դ) Բառարանում միօրինակությունը խախտված է նաև մի շարք տերմինների ալլ նախդիրների և վերջավորությունների դեպքում. օրինակներ՝

автокаталитический թարգմանված է ինքնակատալիզային (2), իսկ каталитическое окисление-ն՝ կատալիտիկ օքսիդացում (125), гемипеллюлоза-ն՝ հեմիցելուլոզա (58), իսկ целлюлоза-ն՝ ցելուլոզ (408), глюкоза-ն (65), фруктоза-ն (402) և мальтоза-ն (171) թարգմանված են առանց ա վերջավորութիւն (հիշտ), իսկ մի ալլ շաքար՝ сахароза-ն՝ ա վերջավորութիւն (սխալ)՝ սախարոզա (316)։ полимеризация-ն թարգմանված է պոլիմերացում (264) (հիշտ), իսկ сополимеризация-ն՝ սոպոլիմերիզացիա (340) (սխալ), хлористый, քլորալին և նույն էշում էլ՝ хлористый — քլորիդ (405)։ дериват-ը թարգմանված է ածանցուկ, դերիվատ (79), իսկ производное (ռուսական բառը, որը նույնն է ինչ ատինական դերիվատը)՝ ածանցյալ (352)։ связь молекулярная թարգմանված է մոլեկուլային կապ (322), իսկ молекулярный вес-ը՝ մոլեկուլար կշիռ (185)։

Ե) Միօրինակութիւնը չի պահպանված նաև մի շարք տերմինների մեջ հոդակապ ունենալ-չունենալու հարցում։ Որոշ դեպքերում էլ հոդակապը հիշտ չի գրված։ օրինակներ՝ аминсахар—ամինաշաքար (7), իսկ аминпропионовая кислота-ի դեպքում՝ ամինպրոպիոնական թթու (7), аминогруппа—ամինախումբ, իսկ аминлиз-ի դեպքում՝ ամինոլիզ (7), бромбензол-ը՝ բրոմբենզոլ (27) և хлорбензол-ը՝ քլորբենզոլ (405) (առանց հոդակապի), իսկ միանգամայն նման միացութիւն водбензол-ը՝ լոդաբենզոլ (ա հոդակապով) (115)։ фруктовый сахар-ը թարգմանված է մեկ բարդ բառով՝ պլուդաշաքար (402), իսկ виноградный сахар-ը՝ երկու բառերով՝ խաղողի շաքար (37) և ալլն։

Բոլոր ալն կապակցութիւններում, որոնց մեջ կան амин բառը և օ հոդակապը (амино-), հալերենում պետք է թարգմանել միայն ամինա (ա հոդակապով)։ բոլոր տեսակի շաքարները, որոնց անունները ռուսերենում կադմրված են երկու բառերից (բերված օրինակներից բացի նաև солодовый, молочный, тростниковый сахар և ալլն) մեր կարծիքով հալերեն պետք է թարգմանել ա հոդակապով միացած մեկ բարդ բառով (ածիկաշաքար, կաթնաշաքար, եղեգնաշաքար և ալլն) և ոչ թե երկու բառերով։

զ) Բառարանում միօրինակութիւնը խախտված է նաև մի շարք ուրիշ (ալդ թվում նաև ոչ քիմիական տերմինների) դեպքերում։ օրինակներ՝ галогиды բառի դիմացը գրված է՝ տե՛ս галогены (57), վերջինի դիմացը՝ հալոգեններ (56), полигалоидный բառը թարգմանված է պոլիհալոիդային (264) (նախընտրելի պետք է համարել առաջին ձևը՝ հալոգենը)։ дезалкилирование-ն թարգմանված է ալկիլազրկում, ալկիլաքսում (77), իսկ дезодорация-ն՝ հոտաջնջում (78) (փոխանակ հոտազրկումի)։ желтая кровяная соль-ը թարգմանված է արլան դեղին աղ (93), իսկ красная кровяная соль-ը՝ արլունակարմիր աղ (153), (որին ռուսերենում պետք է համապատասխաներ кровянокрасная соль-ը)։ зажим—սեղմակ, իսկ зажимной—սեղմիչ (91), փոխանակ սեղմակալին, սեղմակավոր), микроскоп—մանրադիտակ (182), իսկ субмикроскопический—հեթամիկրոսկոպիկ (359)։ хлористый метил, хлористый калий, кальций, натрий—համապատասխանաբար թարգմանված են՝ մեթիլի, կալիումի, կալցիումի, նատրիումի քլորիդ, իսկ хлористый этил, хлористый винил хлористый этилен-ը՝ համապատասխանաբար էթիլ քլորիդ, վինիլ քլորիդ, էթիլեն քլորիդ (405)։

Քլորիդ (ինչպես նաև բրոմիդ, լոդիդ, ֆտորիդ) նշանակում է քլորի (հա-

մապատասխանաբար՝ մյուս հալոգենների) միացություն մի ալլ տարրի կամ տարրերի խմբերի (ռադիկալի) հետ. այդ պատճառով էլ քլորիդ բառի հետ պետք է ցույց տալ թե մի տարրի կամ ռադիկալի քլորիդի (հալոգենիդի) մասին է խոսքը. ուստի և քլորիդ բառից առաջ գրվող տարրի կամ ռադիկալի անվանը պետք է ավելացվի ի (կալիումի լոդիդ, պրոպիլի բրոմիդ, վինիլի քլորիդ և այլն, և ոչ թե երկաթ քլորիդ, արծաթ բրոմիդ և այլն: Այդ սկզբունքը բառարանում պահպանված է ազոտական և ծծմբական թթուների աղերի դեպքում (4, 325):

Фольга-ն թարգմանված է մետաղաթաղանք (398), իսկ оловянная фольга-ն՝ անագաթիթեղ (319): Բացի նրանից, որ այստեղ ևս խախտված է միօրինակությունը, фольга-ի երկու՝ թաղանթ և թիթեղ թարգմանություններն էլ անհաշող պիտի համարել. фольга-ն շատ բարակ մետաղյա թերթ է. ուստի գուցե ավելի ճիշտ կլինեի այն թարգմանել մետաղաթերթ (իսկ оловянная фольга-ն՝ անագաթերթ) կամ նրբաթիթեղ:

է) Վերջապես բառարանում միօրինակությունը խախտված է նաև տերմինային մի շարք կապակցությունների տեղը որոշելու և միևնույն քիմիական միացությունը ըստ տարբեր հատկանիշի բառարանի տարբեր մասերում չկրկնելու հարցում. օրինակներ՝ մետաղների քլորիդները (ի թիվս նրանց ալլ միացությունների) բերված են այդ մետաղների բաժիններում և նորից կրկնված են (որպես хлористый-ի օրինակներ) 405 էջում: Համապատասխան մետաղների բաժիններում բացակայում են (մեկ-երկու բացառությամբ) նրանց ծծմբաթթվական աղերը, որոնք ոչ ճիշտ կերպով բերված են ծծմբաթթվական աղերի հատկանիշով (325). пар-ի բոլոր տեսակները բերված են 233 էջում, իսկ мятый пар-ը՝ 193 էջում, և այլն:

3. Միայն եկ թարգմանված բազմաթիվ տերմիններ. օրինակներ՝ альдольная конденсация— ալդոլային խառցում (6) [պետք է լինեի կոնդենսում. չէ որ конденсация-ն ճիշտ կերպով թարգմանված է ոչ միայն որպես խառցում, այլև որպես կոնդենսում (140)]. бромистый—բրոմիդ (27) (պետք է լինեի բրոմա-, բրոմային, բրոմիդ). ацетоуксусный эфир—ացետաքացախաթթվական եթեր (16), պետք է լինեի էթեր). изо-строение—իզո-կազմություն (111), строение вещества—նյութի կազմություն (357), циклическое строение—ցիկլային կազմություն (411), строение—շինություն (357), մինչդեռ строение-ն նշանակում է նաև կառուցվածք, իսկ изо-строение-ի, строение вещества և циклическое строение-ի դեպքում այն միմիայն որպես կառուցվածք էլ պետք է թարգմանվի. грунтовая вода—գիսմաջուր (39), грунтовые воды, գետնաջրեր (71), (պետք է լինեի ստորերկրյա ջուր, ստորերկրյա ջրեր, քանի որ գետնաջուրը почвенная вода-ն է, որը ալդպես էլ թարգմանված է (39) բառարանում). лак, копало-янтарный—խեծաաթային լաք (160). копал-ն այստեղ թարգմանված է որպես խեծ, այնինչ այն, ինչպես և սաթը ոչ թե խեծ է առհասարակ, այլ խեծերի մի անախը. линтер—լինտեր (աղվամազգառիչ) (165). բամբակի կորիզի վրա-ից երկար մանրաթելիկները հեռացնելուց հետո մնացող աղվամազը՝ լինտեր կոչվող կարճ մանրաթելիկները շփոթված են այդ լինտերը կորիզի վրա-ից հեռացնող լինտերային մեքենայի հետ. платинированный асбест—պլատինացած ասբեստ (249) (պետք է լինեի պլատինած, պլատինածածկ ասբեստ), серная кислота—ծծմբաթթու (324) (ճիշտը՝ ծծմբաղան թթու) сернисто-Известия XI, 4—6

кислый натрий—նատրիումի սուլֆիդ (324) (ռուսերենը վերաբերում է Na_2SO_3 -ին, թարգմանությունը՝ Na_2S -ին), серный эфир—ծծմբի եթեր (325) (серный эфир սխալ անունը մնացել է պատմականորեն և այդ հայտնի է ամեն մի քիմիկոսի. ճիշտ անունը եթիլ-կամ դիէթիլային եթեր է). сегнетова соль—սեգնետի աղ՝ (322) ճիշտը՝ Сегнетова соль—Սեգնետի աղ՝ գինեթթվի կրկնակի Na-K -ական աղ). пикнометр - ծավալաչափ (245) (պիկնոմետրով ոչ թե ծավալն են չափում, այլ տեսակարար կշիռն են որոշում). фосфат—ֆոսֆատ, ֆոսֆատաթթվի աղ (399) (ֆոսֆատաթթու գոյություն չունի. պետք է լինի օրթո-ֆոսֆորական թթվի աղ). фосфорная кислота—ֆոսֆորային թթու (399) (նույն կերպ է թարգմանված նաև фосфористая кислота-ն, թեև առաջինը H_3PO_4 -ն է և պետք է թարգմանվի ֆոսֆորական թթու, իսկ երկրորդը՝ H_3PO_3 -ն է). трихромокалиевая соль—կալիումի եռաքլորատ (379). этиленовый углеводород—էթիլածխաջրածին (435) (պետք է լինի էթիլենային ածխաջրածին) և այլն:

4. Մեկից ավելի իմաստ կամ երանդ ունեցող մի շարք տերմինների համար բառարանում տրված է միայն մեկ իմաստ կամ երանդ, անտես առնելով մյուսները. օրինակներ՝ иницирование—նախապայթեցում—(113). իսկ ինչպես կարելի է դրա օգնությամբ թարգմանել иницирование реакции կապակցությունը. չէ՞ որ այստեղ խոսքը վերաբերվում է ոչ թե պայթեցմանը, այլ ռեակցիան սկսելուն. иодистый—յոդային (115), хлористый—քլորային (405), цианистый—ցիանական, ցիանային (410). վերջին երեք բառերի թարգմանությունների օգնությամբ չեն թարգմանվի, օրինակ, иодистый калий, хлористый бутыл, цианистый натрий և այլ կապակցությունները, որոնց դեպքում պետք է ունենալ համապատասխանաբար հիշյալ բառերի նաև յոդիդ, քլորիդ, ցիանիդ թարգմանությունները. металлический—մետաղե, մետաղյա (178). սրանց օգնությամբ չի կարելի թարգմանել, օրինակ, металлический натрий. ուրեմն պետք էր տալ նաև «մետաղ» ճմետադական վարիանտները. керамика—կերամիկա, խեցագործություն, կավագործություն. այս դեպքում անտես է առնված կավից պատրաստված իրերը ևս այդ բառով կոչվելու մյուս իմաստը. миниатюра—մանրանկար (183). անտես է առնված նրա մյուս՝ մանրանկարչության իմաստը. сырой—հում, խոնավ, նամ, сырец—հում աղյուս (362). հում կամ խոնավ թարգմանությամբ անիմաստ կլինի թարգմանել, օրինակ, сырая нефть, сырой продукт, спирт сырец՝ կապակցությունները, որտեղ сырой բառը նշանակում է չմշակված, չզտված, (հում աղյուսն էլ անհաշող արտահատություն է . ավելի ճիշտ կլիներ ասել չթրծած աղյուս). разведение բառի համար տրված թարգմանություններով (294) անհնարին է թարգմանել, օրինակ, разведение раствора կապակցությունը (լուծույթի նոսրացում). фактор—գործոն (392). իսկ գործոն-ի միջոցով ինչպես թարգմանել фактор раствора; углекислый—ածխաթթվական (383). այս կերպ չի կարելի թարգմանել, օրինակ, углекислый кальций.—նման դեպքերում պետք է տալ նաև կարրոնատ վարիանտը. упаривание—շոգեփափկացում (388). այս վարիանտով բոլորովին անիմաստ կլինի թարգմանել упаривание раствора կապակցությունը, որտեղ упаривание-ն նշանակում է մասամբ գոլորշիացնել, գոլորշիացնելով փոքրացնել լուծույթի ծավալը, և այլն:

5. Սխալ են գրված բազմաթիվ տերմիններ. օրինակներ՝ ազոքսիամիա-

ցություններ (3), ակոժեւներ արկոնոլյատ, արկոզոներ (5) ալոքսան, аллонж (6), ամինաճուանիդին, ամինոնիոմի ռոդանիտ, անտրացին (10), բերտոլեայան աղ (22), վանադատթու (32), արկիլ հալոգենիտ, (56), գլիոքսալ (64), դիոքսան (84), дибромизм, дифракционный, дифракция (85) իոքոքսազոլ (110), կվանտ, կվանտային (127), կալծքար (153), ստանիտ, ստանատ (219) պոլիոկսիններ (264, սաֆրաններ (316), սուլֆոքսիլ (359), уайт-спирт—ուալթ-սպիրտ (383), хлорофил (405), քստրոնցիոմի քլորատ (405), խրոմատոգրաֆիկ անալիզ, խրոմատիկ խոտորում, խրոմատոմետրիա (407) և այլն:

6. Անհաջող են մի շարք տերմիններ և տերմինային կապակցություններ. օրինակներ՝ խաղողի շաքար (37) (փոխանակ խաղողաշաքարի), հոտաշնջում (78), (փոխանակ՝ հոտազրկումի), գլյուկոզ (65) (խաղողաշաքար), կալիումի աղ (320), նատրիումի աղ (203) (կալիումական, նատրիումական աղ), ֆոսֆորային ջրածին (399) (ֆոսֆորաջրածին), хрупкий—քեկուն, սարթ (407) (քեկուն կամ սարթ բառերով ինչպես կարելի է թարգմանել, օրինակ, хрупкий снег—ը. ерш—ոզնակ, փշամբխ (91), кипелка—հոակ (չհանգած կիր) (129), волокно—թելք, թելիկ (45) (անտես է առնված մանրաթելը), реагировать—ռեակցում, ռեագիրում (303), твердое вещество—կարծր նյութ (363) (միայն «կարծր»-ը չի սպառում твердое հասկացողությունը. չէ որ, օրինակ, փալոր նույնպես твердое вещество է, բայց ոչ թե կարծր է, ալլ պինդ):

7. Բառարանում տեղ են դրել նաև մի շարք պեկորոլություններ. օրինակներ՝ бор фтористый (26) և фтористый бор (402), водород фтористый (41) և фтористый водород (402), многовалентный (183) և поливалентный (264), однозамещенный (216) և монозамещенный (187) (ի դեպ՝ առաջինը թարգմանված է միատեղակալված, երկրորդը՝ մեծատեղակալված), кальций фтористый (120) և фтористый кальций (402), олово сернистое (219) և сернистое олово (324), ֆոսֆոր, լուսածին, (399), պլատին, լուսնոսկի (249) և այլն:

Բերված բոլոր օրինակներում երկրորդ վարիանտով կրկնողությունները կամ երկրորդ թարգմանություններն պեկորոլ են և բառարանում չպետք է լինեին:

8. Հայտնի է, որ մի շարք քիմիական նյութեր ունեն երկու կամ ավելի սարբեր անուններ. նման դեպքերում նյութի մի անունը (անվանումը) պետք է ընդունել որպես հիմնականը, նախընտրելին, իսկ մյուսները հիշատակելիս (քանի որ նդանց ևս հանդիպում ենք գրականության մեջ) նշել այդ հիմնականը, որի դիմաց էլ պետք է գրված լինի նրա թարգմանությունը: Այս սկզբունքը նույնպես շատ դեպքերում խախտված է բառարանում: Մի շարք դեպքերում միևնույն նյութը կամ երկույթը հիշատակված է տարբեր անուններով, առանց նշելու, որ դրանք վերաբերում են միևնույն նյութին կամ երկույթին. օրինակներ՝ ареометр (11) և (հնացած, քիչ գործածական) денсиметр (79), дегидрирование և дегирогенизация (77), медь однохлористая (175) և хлористая медь (405), фтористоводородная кислота (402) և плавиковая кислота (247), срномедная соль և срноокислая медь (325), сернокальциевая соль և серноизвестковая соль (325), серноокислый магний և серномагнезиальная соль (325), серноокислый барий (325) և сернобариевая соль (324) և այլն:

9. Բառարանում տեղ են դրել նաև բազմաթիվ կարևոր վրիպակներ,

որոնք չեն մտել խմբագրություն նկատած և բառարանին կցված վրիպակների ցանկը. օրինակներ՝ аминосоединение—ամինամիացություններ (7), բարբիտաթթու (19) (պետք է լինի՝ բարբիտուրաթթու), բենզալաթթվի ալդեհիդ (32), бромпроизводная (27) (պետք է լինի՝ бромпроизводное), глутарова кислота (65), железо сортовое (92), каллоидное состояние вещества նյութերի կոլոիդ վիճակ (135), кето-экольная таутометрия կետո-էկոլային տաուտոմերիա (123), պերագոտաթթու (195), пипен—պիպեն (246), пирола (246), պոլիուլեֆիններ (264), սուլֆոքսիլ—359), և ավելի:

10. Բառարանի ծավալը մեծ չէ և արդ պատճառով նրանում չէին կարող ընդգրկվել ցանկալի շատ և շատ տերմիններ, սակայն նրա ծավալի սահմաններում էլ կարող էին ընդգրկվել և պետք է ընդգրկվեին (թեկուզ բառարանում եղած ավելորդությունների հաշվին) լայն տարածում ունեցող շատ գործածական այնպիսի տերմիններ և տերմինային կապակցություններ, ինչպես, օրինակ՝ моторное топливо, химическое равновесие, инфракрасный спектр (մյուս բոլոր սպեկտրները բառարանում կան), спектр комбинационного рассеяния, счетная линейка (կա счетная машина-ն), дутье кислородное (ալլ տիպի дутье-ները բառարանում կան), серп, мельхиор (ալլ միահալուլթները կան), критическое давление, эрг, местный перегрев և ավելի: Ամփոփենք:

Մեր կարծիքով ուսուհայերեն պոլիտեխնիկական բառարանը մեծ չափով զերծ կլիներ լուրջ թերություններից, եթե Ալադեմիայի Տեխնիկական գիտությունների բաժանմունքի բյուրոն և Ալադեմիայի նախագահությունը ա) բառարանը մշակողների և խմբագրողների նկատմամբ ավելի խստադահանջ լինեին և բ) եթե բառարանի խմբագրությունը կազմված չլիներ միակողմանի կերպով: Պարզենք մեր միտքը:

ա) Բառարանի խմբագրության աշխատանքում թերությունների զգալի մասը կկանխվեր, եթե բառարանը կազմող մասնագիտական հանձնաժողովների նյութերի հետ, արդ նյութերը լրացնելու, ճշտելու և իրար հետ համաձայնեցնելու նպատակով, փոխադարձաբար ծանոթանալին հարակից մասնագիտություն կամ մասնագիտությունների մյուս հանձնաժողովները, ինչպես և հանձնաժողովներում չընդգրկված՝ բուհերի և գիտահետազոտական համապատասխան ինստիտուտների որակյալ մասնագետները:

Տեխնիկական գիտությունների բաժանմունքի բյուրոն այս միջոցառումը կիրառել է մասամբ միայն, ոչ մինչև վերջ և ավելի շուտ ձեականորեն. օրինակ՝ քիմիական հանձնաժողովի նյութերը համապատասխան գիտահետազոտական ինստիտուտի ուղարկելուց հետո տխուհի կաարված դիտողությունները հանձնել է ոչ թե նյութի հեղինակ հանձնաժողովին, ալլ խմբագրությանը: Դրա հետևանքով և խմբագիրների թերացման պատճառով (արված բոլոր դիտողությունները ճիշտ համարելը և ընդունելը) քիմիական տերմինների գծով բառարանում տեղ են գտել միօրինակության խախտումները, սխալ թարգմանությունները և ավելի:

բ) Բառարանի խմբագրությունը կազմված է եղել միակողմանի. բառարանում ներկայացված քսանից ավելի մասնագիտությունների ողջ նյութի խմբագրելը դրվել է երեք անձից կազմված մի խմբագրության վրա, որի կազմում եղած երկու տեխնիկական մասնագետները, բնակոնաբար, չէին կարող ըստ հարկի ընդգրկել ողջ նյութը և ապահովել բառարանի մեծապես ան-

թևերի խմբագրումը: Իհարկէ, ոչ հնարավոր էր, ոչ էլ անհրաժեշտ խմբագրութիւն կազմում ունենալ բոլոր մասնագիտութիւնների ներկայացուցիչներին: Սակայն անհրաժեշտ էր, որ այդ կազմում լինեին ավելի մեծ թվով մասնագիտութիւնների ալիքիսի ներկայացուցիչ-մասնագետներ, որոնք միաժամանակ տիրապետեին նաև ոռոսաց և հայոց լեզուներին և ի վիճակի լինեին ներկայացնել նաև մեկ-երկու կամ երկու-երեք հարակից մասնագիտութիւններ:

Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանի մասին գրած իր գրախոսականում (նվիրված հիմնականում շինարարական տերմիններին) Ռ. Մանուկյանը [2] առաջարկում է բառարանն ընդունել միայն որպէս նախագիծ և ստեղծել նոր հանձնաժողով՝ գործնական օգտագործման համար պիտանի բառարան ստեղծելու համար:

Նոր, ավելի կատարյալ Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան հրատարակելու համար մեր կարծոքով անհրաժեշտ է ոչ թե անհապաղ ստեղծել նոր հանձնաժողով, այլ բաժանմունքներին կից նորից ստեղծել հայերենին և ոռոսերենին տիրապետող բարձրորակ մասնագետներից կադրված համապատասխան մասնագիտական մշտեղծ հանձնաժողովներ, որոնք անցյալում գործած հանձնաժողովների պէս սխառեմատիկաբար զբաղվեն հարկական տեխնիկական տերմինները վերանայելով և նորերն ստեղծելով: Միաժամանակ անհրաժեշտ է, որպէսզի հանձնաժողովների աշխատեցնք ինչոր ձևով պլանավորվի, որպէսզի ամեն մի որոշակի ժամանակամիջոցի համար (կիսամյակ, տարի) նախատեսնվի և կատարվի որոշակի աշխատանք:

Գործն այս կերպ կազմակերպելով կարելի կլինի լավ նախապատրաստել նաև Պոլիտեխնիկական բառարանի ոչ թե որոշ չափով բարեփոխած և ուղղած, այլ ավելի ընդարձակ և կատարյալ բառարանի նոր հրատարակութիւնը:

Հայկական ՄՍՌ ԳԱ

Օրդենական քիմիայի ինստիտուտ

Ստեցվել է 17 V 1958

Գ Ր Ա. Կ Ա. Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Վ. Դ. Ազատյան, Հայկական ՄՍՌ ԳԱ Տեղեկագիր (Ֆիզ.-մաթ., բն. և տեխն. գիտութ.) IX, № 8, 101 (1956):
2. Ռ. Մանուկյան, Գրական Թերթ, № 14, 6/IV 1958: Հայկական ՄՍՌ ԳԱ Տեղեկագիր (Տեխ. գիտ. սերիա) XI, № 3, 57, 1958: